

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Բոնի Փաուլը այսօր կը ժամանէ Միջին Արեւելք՝ պաղեստինեիսրայէլեան բախումներուն պիտիւնով մը ապահովելու յոյսով: Ան տեսակցութիւններ պիտի ունենայ Մարոքի թագաւորին, Սէուական Արաբիոյ գահաժառանգ իշխանին, Եգիպտոսի նախագահին, ինչպէս նաեւ Երոսկական Միութեան եւ Ռուսիոյ իր պաշտօնակիցներուն հետ:

Միջին Արեւելք ուղղուելէ առաջ, Փաուլը հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Արիէլ Շարոնի հետ: Ան ըսաւ նաեւ, որ եթէ «պարագաները ներքէն», հանդիպում պիտի ունենայ Եւսաբ Մարաբիի հետ: Փաուլը անգամ մը եւս կոչ ուղղեց Արաբաթի՝ իրապարակաւ պահանջելու, որ պաղեստինցիները վար առնեն Իսրայէլի դէմ բարձրացուցած պէնքերը:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՁ ՓՈԽԱԴԱՐՁ ՌՄԲԱԿՈՑՈՒՄՆԵՐ՝ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ՀՐԶՊԱԼԼԱՅԻ ՄԻՋԵՒ



Զֆարշուպայի մէջ լիբանանեան դիրք մը կը մխայ՝ իսրայէլեան օդանաւային յարձակումէ մը ետք

Մագարէ՛՛ Շրպայի մէջ երէկ յետմիջօրէին սաստիկ բախումներ տեղի ունեցան իսրայէլեան դիրքերուն հիմադրութեան ուժերուն միջեւ. փոխադարձ ուժեղացումներու ու հրթիռարձակումները շարունակուեցան մինչեւ գիշեր: Երեկոյեան իսրայէլեան ուղղակիութիւններ կրակ բացին Ռամթայի, Ռուսասթ Արամի եւ Սըմաբայի դիրքերու շրջակայ բլուրներուն վրայ, մինչ սաստիկ ուժեղացումի կ'ենթարկուէր Մագարէ՛՛ Շրպայի մէջ իսրայէլեան «Ռատար»-ի դիրքը: Իսրայէլեան բանակը հաղորդեց նաեւ, որ լիբանանեան հողերէն ուժերը արձակուած են նաեւ դէպի հիւսիսային իսրայէլ, իսկ Շրպայի կողմէն ընթացքին ծանրորէն վիրաւորուած են երկու զինուորներ:

«ԸԱԹՈՒՆԱ»ՆԵՐ՝ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՐԱՅ ԵՒ ՀԱՐԱՒԻ ՄԷՁ

Մագարէ՛՛ Շրպայի մէջ Դիմադրութեան եւ իսրայէլեան ուժերուն միջեւ բախումներ տեղի ունեցած էին նաեւ Շարաթ կէսօրէ ետք:

Այս բախումներուն ընթացքին, անձանօթ տարրեր քաղաքային ինքնաշարժով Ուազգանի գիւղին մօտ կանգ առնելով՝ վեց կամ եօթը «Քաթիուշ»ներ արձակեցին Ղաթար գիւղին վրայ, ապա փախուստ տուին:

Նոյն պահուն, Հըզպալլա կը ուժեղացնէր իսրայէլեան բանակի Մագարէ՛՛ Շրպայի դիրքերը, որոնք կը հակադարձէին ուժեղացումով սահմանամերձ լիբանանեան շրջաններ:

Իսրայէլեան օդանաւեր 8 ուժերը արձակեցին Շրպայի եւ Քֆարշուպայի վրայ:

Միւս կողմէ, Ֆիլիստին գիւղերուն Պընթըփայլի մէկ բլուրին վրայ գտան 107 մմ. երկու հրթիռներ, որոնք լարուած եւ արձակուելու պատրաստ վիճակի մէջ էին: Զինուորները տեղեակ պահեցին իրենց հրամանատարութիւնը, որ իր կարգին կապուեցաւ լիբանանեան բանակին: Բանակի սակրաւորներ անմիջապէս չհզոգացուցին ուժերը:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԱՄԲՈՂԱՅՈՒՅԻՆ ԻՐԵՆՅ ԴԻՐՔԵՐՈՒՄՆԵՐ՝ ՊԱՐՊՈՒՄԸ

Սուրիական ուժերը Շարաթ գիշեր ամբողջացուցին պարպումը իրենց բոլոր դիրքերուն, կորս 1986ին պահած են Սաաիիէթէն մինչեւ Աուալի գետ, Սալտայի մօտ, ինչպէս նաեւ Ռքմալլի, Ալմանի, Ժիէի, Ուաւի Չէյալի, Տըլիամի, Սաաիիէթի եւ Իքլիմ Սարրուպի կարգ մը գիւղերու մէջ: Լիբանանեան բանակի ջոկատներ տեղափոխուեցան պարպուած դիրքերէն ուսանց մէջ:

ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆԳ ՅԱՄԱՔԱՄԱՍԵՐՈՒՆ ՄԷՁ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐ Ի ՆՊԱՍ ՊԱՂԵՍԻՆՅԻՆԵՐՈՒՆ

ԻՍՐԱՅԷԼ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԶՆՆԱՅԵՐ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԵՒ ԼՈՆՏՈՆԻ ՃՆՇՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿԵ ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ԴԵՍ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՍԱՆՁԱՐՁԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Իսրայէլեան «Ափաշի» մը՝ Նապոլուսի վերեւ

Այն պահուն, երբ Միացեալ Նահանգներու նախագահ Ջորժ Պուշ եւ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Դլէր ճնշում կը բանեցնէին իսրայէլի վրայ, պահանջելով, որ անյապաղ հետացնէ ուժերը պաղեստինեան շրջաններէն, Արիէլ Շարոն անդրդուելի կը մնար, հրահանգելով շարունակել պաղեստինեան շրջաններուն դէմ զինուորական գործողութիւնը՝ արժատահան ընելու համար «հարեկչական» ցանցերն ու անոնց

հետեւորդները: Ան աւելցուց, որ իսրայէլ իր կարգին պէտք է հետացնէ իր ուժերը պաղեստինեան քաղաքներէն, որոնք վերջերս գրաւուած են իսրայէլեան բանակին կողմէ: Ազգային ապահովութեան հարցերու խորհրդատու Քոնտրիկա Ռայս դիտել տուաւ, որ իսրայէլ յայտարարելու պէտք է հետանալ պաղեստինեան շրջաններէն: Պլէր ըսաւ, որ իսրայէլը

Շար.՝ էջ 10

ԻՐԱՆԻ ՀԵՏ ԻՐ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

ՄՈՍԿՈՒԱ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐ Կ՝ՈՒՂՂԷ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ

Ռուսիա շաբաթավերջին մարտահրաւէր ուղղած է Միացեալ Նահանգներուն, որ անոնք փաստեր տան, թէ Մոսկուա իրանի զինուորական արհեստագիտութիւնը յատկացուցած է, այլապէս անոնք պէտք է աւիթ տան երկու երկիրներուն, որ շարունակեն իրենց յարաբերութիւնները:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իգոր Իվանով իրանցի իր պաշտօնակիցին՝ Քամալ Նարազիի հետ, մամլոյ միացեալ ասուլիսի մը ընթացքին Ուաշինկթընի կողմէն խոսեց, որ անփոփոխութիւն փաստեր տայ, թէ Մոսկուայի եւ Թեհրանի միջեւ կորիզային մարզին մէջ թափ ստացող գործակցութիւնը Մ. Նահանգներու սպառնալիք մըն է:

«Յամենայնդէպս, կորիզային մարզի համաձայնութիւններ մեր երկկողմանի յարաբերութիւններուն կը վերաբերին», ըսած է ան:

Երկու նախարարները կը խօսէին Ուրբաթ օր, իսրայէլի Մոսկուա երկօրեայ այցելութեան աւարտին:

Անոնք յատկապէս քննարկած են հարեկչութեան դէմ պայքարելու միջոցները, Իրանի Պուշէ՛՛ր կորիզային ու-

ժանիթի կայանին Մոսկուայի կողմէ ամբողջացուած եւ կասպից ծովը բաժնեկցելու հարցը: Ռուսիա եղած է միակ երկիրը, որ ընդունած է իրանի Պուշէ՛՛րի կորիզային ուժանիթի կայանին աշխատանքը աւարտել: Թեհրան այժմ կ'ուզէ, որ Մոսկուա երկրորդ հնոց մը կառուցէ՝ առաջին ծրագրուած հնոցին կողքին, ահագանգի մատնելով Ուաշինկթընը: (ՌՈՅԹԸՐԸ)

ԱՅՂԱՆԻՍԱՆ

ԽԱՂԱՂԱՐԱՐ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԻՄ՝ ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԱՐՔ

ՔԱՊՈՒԼ, 7 (ՌՈՅԹԸՐԸ).— Աֆղանիստանի մէջ առնուազն 2 հրթիռներ արձակուած են կիրակի առաւօտին՝ կեդրոնական Քապուլի մէջ բազմազգեան խաղաղարար ուժերու կեդրոնատեղիին վրայ, առանց մարդկային վնասներ պատճառելու:

Քանի մը օր առաջ Աֆղանիստանի կառավարութեան պաշտօնատարներ կը յայտնէին, թէ փոխանցման հանգրուանի վարչակարգը ապակայունացնելու նպատակով դաւ մը ձախողութեան մատնուած է եւ թէ օտար ուժեր նոյնպէս թիրախ եղած են ուժեղութեան ծրագրուած արշաւի մը:

Գնդապետ Նիլ Փեքըմ յայտնած է, թէ օտար խաղաղարար ուժերը Կիրակի օրուան դէպքերն մեծ կարեւորութիւն կ'ընծայեն:

Աֆղան պաշտօնատարներ ըսած են, թէ շուրջ 160 կասկածելիներ ձերբակալուած են եւ նախկին վարչապետ կուլուտտին Հիքմաթիարը ամբաստանած՝ Համիտ Քարգայի վարչակարգը տապալելու նպատակով վերոնշեալ դաւը սարքած ըլլալու յանցանքով:

Միւս կողմէ, ՄԱԿի մարդկային իրաւանց մէկ խմբակը երէկ Պամիան հանանց մեկնած է՝ քննութիւն բանալու համար հաւաքական երեք գերեզմաններու շուրջ, որոնք, ըստ տեղացիներու, սպաննուած են Դեկտեմբերին թալեպան վարչակարգին տապալումէն աւիւ մը առաջ:

Անոնք գտնուած են Ուրբաթ գիշեր, Պամիանի շրջանային մայրաքաղաքին օդակայանին մօտ: (ՌՈՅԹԸՐԸ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Միջին Արեւելքում իրադրութիւնը դարձել է ծայր աստիճան պայթիւնավտանգ, որի հետեւանքները անկանխատեսելի են եւ սպառնում են տարածաշրջանի կայունութեան եւ խաղաղութեան: Այս կացութեան գլխաւոր պատասխանատուն համարելով Իսրայէլի կառավարութիւնը, խստորէն դատապարտում ենք պաղեստինցի ժողովրդի դէմ պիտուրական գործողութիւնները եւ մեր պօրակցութիւնն ենք յայտնում իր իրաւունքների համար պայքարող պաղեստինցի ժողովրդին:

Միանում ենք միջազգային ընտանիքի կոչելին՝ պաղեստինեան գրաւեալ շրջաններից անմիջապէս դուրս բերելու իսրայէլեան պիտուր ուժերը, հաստատելու պիտուրա եւ վերականգնելու բանակցութիւնները արդար, ամբողջական եւ կայուն խաղաղութիւն հաստատելու համար:

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈ

6 Ապրիլ 2002

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Ապրիլ 6ին, Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան ընդունեց Հ. Յ. Դ. Բիւրոյի կազմը, գլխաւորութեամբ Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարգարեանի:

Երկու ժամ տեւած հանդիպումին ընթացքին քննարկուեցան տարածաշրջանի վերջին իրադրութիւնները եւ Հայրենիք - Միւրաք յարաբերութիւնները: Հանդիպումը անցաւ ջերմ մթնոլորտի մէջ:

ՅՐԱՆԱՅԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՊԱՅԸՐ

ԸՍՏ ՀԱՐՅԱՆՈՅՉՆԵՐՈՒՆ՝ ԾԻՐԱՔ ՓՈՔՐ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԳԵՐԱԶԱՆՅԷ ԺՈՍՓԷՆԸ



Ժաք Ծիրաք

ՓԱՐԻՉ, 7 (ՌՈՅԹԸՐԸ).— Ֆրանսայի մէջ տեղի ունեցած երկու հարցախոյզներ ցոյց տուած են, թէ նախագահ Ժաք Ծիրաք որոշ առաւելութիւն մը ապահոված է բաղադրուած ընկերակարակաւ իր մրցակիցին՝ վարչապետ Լիոնէլ ժոսփէին:

Յառաջիկայ ամիս կայանալիք ընտրութեանց առաջին հանգրուանին նախօրեակին, «Իֆոփ»-ի կատարած մէկ հարցախոյզը, որուն արդիւնքները հրատարակուած են «Լը ժուռնալ տիւ Տիմանը» շաբաթաթերթին մէջ, ցոյց տուած է, թէ Ֆրանսացի բուհարկողներուն շուրջ 47 առ հարիւրը շատ գոհ կամ ընդհանուր առմամբ գոհ է Ծիրաքի իբրեւ նախագահ իրագործումներէն: Անցեալ ամիս 43 առ հարիւրը նման գոհունակութիւն յայտնած էր:

Ժոսփէին ի նպաստ բուհարկողներու համեմատութիւնը որոշ չափով նահանջ արձանագրած է Ապրիլին՝ 42 առ հարիւր, Մարտի 43 առ հարիւրէն:

Այլ հարցախոյզներ նաեւ ցոյց տուած են, թէ պահպանողական Ծիրաք յառաջիկային կ'արձանագրէ բաղադրուած իր մրցակիցին: Ուրբաթ օր, «Սոֆիստ»-ի մէկ հարցախոյզը Ծիրաքի 51 առ հարիւր, Ժոսփէինի 49 առ հարիւր տուած էր՝ Մայիս 5ի ընտրութեանց նախօրեակին:

Ընտրութեանց հազիւ երկու շաբաթ մնացած, Ժոսփէին կը թուի Այ կորի «Ենտրում»էն տառապի:

Ժիշը դեմոկրատ մրցակիցին նման, որ 2000ի Մ. Նահանգներու ընտրութիւններուն քուէներու փոքր համեմատութեամբ պարտուած էր հանրապետական Ջորժ Պուշի դէմ, Ժոսփէին ունի ուժեղ տնտեսութիւն մը ապահոված եւ պարկեշտ ըլլալու վարկ: Սակայն անոր խիստ անձնաւորութիւնն ու ոչ ճկուն կեցածքը չեն յանդողած իր թեկնածութեան գորակցութիւն ապահովել, հակառակ Ծիրաքի կապուած գալթակողութիւններու երկար շարքի մը եւ անոր քաղաքական նուազ նուաճումներուն:

Մինչ այդ, բազմաթիւ հարցախոյզներ ցոյց տուած են նաեւ, թէ մեծ թիւով բուհարկողներ տակաւին որոշում չեն տուած այս կամ այն թեկնածուին ի նպաստ բուհարկելու:

ՏԵՍԱԿԵՏ

ՄՏԱՀՈԳԻՉ ՎԵՐԱԴԱՐՉ

Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տեր Պետրոսեան յայտարարեց քաղաքական բեմ վերադարձը, որուն համաձայն օրինակները «Երկիր» Շաբաթ օրուան համարը (5-11 Ապրիլ), «Մենակեացը դուրս է գալիս ապարանքից» խորագիրով: Անշուշտ խօսքը կը վերաբերի պաշտօնական վերադարձին, որովհետեւ միամտութիւն պէտք է ըլլայ հաւատարմ, թէ ան ամբողջ չորս տարի ձեռնածայ նստաւ ու ղիտեց քաղաքական դէպքերը:

Չանապան մեկնաբանութիւններ կը տրուին ու պիտի տրուին տակաւին այս գծով: Շատեր այս վերադարձին տուն տունը գլխաւոր ազդակը կը նկատեն ներքին պայմանները, դիտել տալով, որ հետպիտէ միատրուող ու ձեւաորոնող ընդդիմադիր ճակատին համար առաջնորդ մը պէտք է եւ միակ անձը նախկին ղեկավարն է, որուն շուրջ կարելի է համախմբուի: Ուրիշներ այս քայլը կը նկատեն տարտղնուած ու կապմալոյծ ՀՀԸՊ վերամիաորումը: Իսկ ոմանք ալ միայն արտաքին ազդակներու, լծակներու ապրեցուցիչներ կը բացատրեն այս քայլը եւ իրեն լուսագոյն հիմնադրում կը նշեն Հարվորտին (Միացեալ Նահանգներ) ստացած անոր հրաւերը, որուն անմիջական արձագանքը եկաւ առաջին հերթին... Այդպէս յայտն: Այս մասին հանգամանօրէն կ'անդրադառնայ 3 Ապրիլի «Ազդակ»ի ակնարկը՝ «Մահմետով - Ապպատով եւ Արցախի վերադարձը Այրպէյձանին» խորագիրով:

Վստահաբար հայրենի նախկին նախագահը որոշ ենթահող ու տուեալներ ունի նման յանդուգն յայտարարութիւն կատարելու համար: Եւ անպայման որ հաւասարապէս կան թէ՛ ներքին, թէ՛ արտաքին ազդակներ, որոնք դարձեալ թեւ կու տան անոր:

Հետաքրքրական է նաեւ թայմինկը. նախագահական ընտրութիւններէն քիչ առաջ: Չուզողի պարտի: Զեմ կարծեր: Իսկ եթէ տակաւին կանոնի է ենթադրելու, թէ Տեր Պետրոսեան թեկնածու պիտի ներկայանայ՝ կամ ոչ, ապա «այո» մը պարագային այժմէն մտածելը կանուխ է:

Վերջին հաշուով ժողովուրդին քուէն է ամէն բան որոշողը, իւրաքանչիւր ղեկավարի ճակատագիրը ճշդողը: Ժողովուրդին կամքին հակառակ կարելի չէ թիպարել: Իսկ այս ճշմարտութեան գիտակցելով, ի՞նչ բացատրութիւն կարելի է տալ, ի՞նչպէս կարելի է մեկնաբանել Լեւոն Տեր Պետրոսեանի քաղաքական ասպարէզ վերադարձը:

Այս օրերուն, Յրանսայի մէջ կը մղուի նախագահական բուռն ընտրապայքար: Տասնվեց թեկնածուներուն մէջ ժաբ Շիրաք եւ Լիոնել ժոսփէն ամէնէն սուր կերպով կը մրցին իրենց թեկնածութեան յաջողութեան համար: Պահ մը մէկ կողմ դնելով ընկերվարական մեր համոզումներն ու պատկանելիութիւնը, եւ առ այդ ընկերվարական թեկնածուին նկատմամբ մեր համակրանքը, անաչառ ըլլանք թէ անմիջապէս հաստատենք, թէ անխտիր բոլոր թեկնածուներն ալ ունին հասարակ յայտարար մը՝ Յրանսայի շահերը ամէն բանէ վեր ու ամէն բանէ առաջ: Այս հաստատումը ակնյայտ կը դառնայ երբ մօտէն կը հետեւինք իւրաքանչիւր թեկնածուի փլաթֆորմին:

Հայաստանի վարչապահին: Լեւոն Տեր Պետրոսեան ի՞նչ փլաթֆորմ ունի ներկայացնելիք: Ծանօթ է՝ արդէն մեկնաբանուող կուրսը, զոր մեր ժողովուրդը կը խտացնէ հիմնական երեք կէտերու մէջ:

Ա.- Սեփականաշնորհման պատրուակով՝ թայան, որուն պատճառով ճարտարարուեստի եւ տնտեսութեան քանդում: Հետեւանք. պանզուածային արտագաղթը:

Բ.- Ներքապային պառակտում՝ տեղացի-օտարերկրացի անհեթեթ տրամադրութեամբ:

Գ.- Հայ Դատի ուրացում. Հայկական Յեղափոխութեան մոռցում, Արեւմտահայաստանի պահանջատիրութենէ հրաժարում, Արցախի նկատմամբ պիջումներու բացալայտ տրամադրութիւն (ազգային գաղափարախօսութիւնը քաղաքական կեղծկաթեգորիա համարել, պատերազմ թէ խաղաղութիւն, Ժեյլեյովոտսքի համաձայնագիր, եւ այլն. հոս չենք անդրադառնար տակաւին հակառաշնակցական մոլուցքային հալածանքին), առանց նախապայմանի ու միակողմանի հայեթորք հաշտութիւն:

1998 Փետրուարին, հայրենի մեր ժողովուրդը ի վերջոյ բանի եւ գործով մերժեց ապագային այս կուրսը եւ տապալեց վարչակարգը, Տերպետրոսեանական վարչակարգը: Եւ ահա այսօր քաղաքական բեմ վերադարձ յայտարարելով, ան կ'արհամարհէ մեր ժողովուրդը, կ'անտեսէ անոր կամքը ու անգամ մը եւս ձեռնոց կը նետէ անոր:

Երբ հասնի պահը, վստահ ենք, որ մեր ժողովուրդը ճակատաբաց կը վերցնէ ձեռնոցը եւ այս անգամ ուղղակի նաքաւորի կ'ենթարկէ ապագային քաղաքականութեան «ոսկի իրան»:

ՀՐԱՉ ՎԵՐՄԵՆՈՒԹԵԱՆ

ՎՐԱՍՏԱՆ - ԱՐԽԱԶԻԱ

ՌՈՒՄ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ՍԱՍԻԿ ԶԱՐԶԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԵՆ

ԹԻՖԼԻՍ, 7 (ՌՈՅԹԸ) - Վրաստանի եւ ըմբոստ Արխազիոյ միջեւ «Գիրարբեկ» զինազուլին հսկող ռուս խաղաղարար զինուորներ տարիներէ ի վեր ամէնէն ուժեղ յարձակումին ենթարկուած են Շարաթ գիշերը:

Ռուս հրամանատար Ալեքսանտր Եւթէե Արխազիոյ մայրաքաղաք Սոխումի մէջ մամուլի Կիրակի օր յայտնած է, թէ խաղաղարար ուժերը հակադարձած են կրակոցին եւ բախուած վերջ գտած է Կիրակի առաւօտեան ժամերուն:

Եւթէե ըսած է, թէ յարձակումը կը թուէր փորձ մը եղած ըլլալ խաղաղարար ուժերը «վարցնելու» եւ անտեսելու:

ՇՈՒՆԱՐԻՍ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՅ ԱՌԱՋԻՆ ՌԱՌՆՏԸ ԱՒԱՐՏԵՅԱԻ

ՊՈՒՏԱՓՈՒԾԹ, 7 (ՌՈՅԹԸ) - Հունգարացի Կիրակի օր մասնակցեցան խորհրդարանական ընտրութեանց առաջին ռաունտի մը, մինչ Պրիւքսէլի մէջ կար այն մտահոգութիւնը, թէ վարչապետ Վիլֆրիդ Օրպանի ռճը հետզհետէ աւելի ազգայնական ընդթ կը ստանայ, երբ Հունգարիա կը պատրաստուի Եւրոպական Միութեան անդամակցելու:

Հարցախոյզներու մէջ, պահպանողական Օրպանի Ֆրոնտս խմբակցու-

լու այս ամսուան սկիզբը գոյացած համաձայնու- ըմբոստ Արխազիոյ միջեւ «Գիրարբեկ» զինազուլին հսկող ռուս խաղաղարար զինուորներ տարիներէ ի վեր ամէնէն ուժեղ յարձակումին ենթարկուած են Շարաթ գիշերը:

Արխազիա կ'ըսէ, թէ Վրաստան կը ծրագրէ իր վերայ յարձակիլ, գործի լծելով յատուկ ղեկատուներ, որոնք ամբրիկեան մասնաշառուկ ուժերու կողմէ կը մարզուին՝ հետամա Պրեւատէնի «Բա- յիտա» ցանցին հետ կապ ունեցող զինեալներ:

Վրաստան կը հերքէ, թէ նման ծրագրերը ու-

նի, շեշտելով, որ զէնքի ուժի պիտի դիմէ միայն իրրեւ վերջին փորձ՝ Արխազիան դարձեալ ձեռք ձգելու համար:

Վրաստան ռուս խաղաղարար ուժերը կ'ամբաստանէ արխազ անջատողականներու ի նպաստ կողմնակալութեամբ, պահանջելով, որ անոնք այլ ազգութիւններու ուժերով փոխարինուին:

Շրջանին մէջ վրացի խաղաղարարներու հրահանատար Քլեմէնթի թեւզածէ հաստատած է, թէ ռուսերը Շարաթ գիշեր յարձակումի ենթարկուած են, սակայն ան հարցականի տակ առած է անոնց տեղեկութիւններուն ճշգրտութիւնը:



Պուլ Եւ Պլեր

ՊՈՒՇ ԵՒ ՊԼԵՐ ՈՐՈՇԱԾ ԵՆ ՏԱՊԱԼԵԼ ՍԱՏՏԱՄ ՅԻՒՄԵՅՆԸ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուլ Եւ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեր որոշած են տապալել Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնը, որուն մթերած հաւաքական քանդումի պէնքերը սպառնալիք կը նկատուին: Երկու դեպքով ալ ներքը շեշտեցին, որ Սատամի դէմ բան մը չընելը ընտրանք չէ:

Պուլ յտակօրէն բացատրեց, որ իր կառավարութեան քաղաքականութեան ծիրին մէջ կ'իյնայ Սատամը իշխանութենէն հեռացնելու ընտրանքը: Պլեր իր կարգին ըսաւ, որ Իրաք շատ աւելի լաւ պիտի ըլլայ առանց Սատամի: Պլեր ուղղակի պօրովիզ չկանգնեցաւ պիտուրական գործողութեան մը, որովհետեւ Բրիտանիոյ մէջ ընդդիմութիւն կայ այդպիսի ծրագրի մը հանդէպ:

Պուլ ըսաւ նաեւ, որ Իրաքի դէմ բոլոր ընտրանքները բաց են: Պուլ Եւ Պլեր համախոս են, թէ Սատամ հաւաքական քանդումի պէնքեր ունի:

Միւս կողմէ, Սատամի կրտսեր տղան՝ Բուսայ յայտարարեց, որ իրաքցիները պատրաստ են հակադարձելու ամերիկեան պիտուրական գործողութեան մը, որուն թիրախը պիտի ըլլայ Իրաք:

Իրաքի իշխող Պասս Կուսակցութիւնը կոչ ուղղեց արաբներուն՝ հարուածելու ամերիկեան ու իսրայէլեան շահերը արաքական աշխարհին մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊՈՍԵՒԱ ՅԻՇԱՍԱԿԵՅ ԵՌԱՄԵԱՅ

ԻՐ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐԸ

Պոսիա Շաբաթ օր նշած է 1992էն 95ի պատերազմին ծայր տալուն 10րդ տարեդարձը: Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոտի այս առիթով կոչ ուղղած է պոսիաիցիներուն, որ իրենց տարակարծութիւնները մէկդի դնեն:

Պաշտօնական քանի մը հանդիսութիւններ միայն տեղի ունեցած են նշելու համար 6 Ապրիլ 1992 թուականը, որ կը նկատուի այն «կէտը», ուրկէ արդէն իսկ գոյութիւն ունեցող տագնապ մը պատերազմի վերածուած էր՝ Սարաեւոյի մէջ բախումներու ծայր տալէն եւ Եւրոպական Համայնքին Պոսիոյ անկախութիւնը ձանձնալէ ետք:

Սակայն տարեդարձը տեղացի բնակիչներուն մտքերուն մէջ էր եւ անոր լայն տեղ տրուած էր Սարաեւոյի մէջ լրատու աղբիւրներու կողմէ: Անոնք կը յիշէին սերպական ուժերուն կողմէ մայրաքաղաքին 43 ամսուան պաշարումը, որուն ընթացքին շուրջ 12 հազար պոսիա արձանագրուած էր:

Փրոտի, որ Սարաեւո միօրեայ այցելութիւն մը տուած է, կոչ ուղղած է Պոսիոյ անցեալը մոռնալ եւ նայիլ ապագային:

Ան նաեւ պոնաշուցուած է պոսիաիցի ղեկավարները, ըսելով, թէ անոնց միջեւ յաւելեալ միասնականութիւն պէտք է ցուցաբերուի, որպէսզի Եւրոպայի մնացեալ բաժինը յաւելեալ պօրակցութիւն ցոյց տայ եւրոպական մարմիններու անդամակցելու անոնց ճիգերուն հանդէպ:

Պոսիոյ ղեկավարներուն տարեդարձին մեծ կարեւորութիւն չընծայելու որոշումը ցուցանիշ էր անոնց միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութեան:

Մինչ իսլամներն ու իսրուաթները պատերազմը սերպական ներխուժումի հետեւանք կը նկատեն, սերպերը պայն կը նկատեն Եւրոպայի պահպանման ի խնդիր պայքար մը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՔ - ԲՈՒԷՅԹ ԶԻՆՆԱԿԱՆ ՄԵԿ ՆՈՐ ՅՈՒՅԱՆԻՇԸ

ՔՈՒԷՅԹ, 7 (ՌՈՅԹԸ) - Իրաքի եւ Քուէյթի միջեւ յարաբերութեանց ձեւեղումը այլ ցուցանիշով մը, Կիրակի օր քուէյթեան թերթը մը հրատարակած է Ծոցի պատերազմէն ի վեր քուէյթեան օրաթերթի մը կողմէ իրաքցի ամէնէն բարձրաստիճան պաշտօնատէր Բուտարի մը հետ կայացած հարցազրոյց մը:

Իրաքի փոխ նախագահ Բահա Եասին Ռամատան հարցազրոյցին մէջ յայտնած է, թէ Մարտի արաքական վեհաժողովին գոյացած հաշտութեան համաձայնութիւնը առաջին ճիշդ քայլն է ղէպի երկու երկիրներուն միջեւ յարաբերութեանց մշակումը:

Կապ ունենալ Իրաքի հետ:

Սակայն քուէյթեան «Ռաշի - Աամ» թերթը անցեալ ամիս իրաքցի պաշտօնատարներու խօսքեր չհրատարակելու «քապու»ն խզած էր, երբ Իրաքի արտաքին գործոց նախարար Նաճի Սապրիի մէկ հարցազրոյցը հրատարակած էր:

Շար.ը՝ էջ 10

Նախաձեռնութեամբ՝ «ԴԻՏԱԿ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՍԱԳԻՐԻ Կազմակերպութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ

Բարձր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՆ Նուիրուած սփիւռքահայ հայատրոփ բանաստեղծ ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ԾՆՆԳԵԱՆ 85ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ 65ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ Ուրբաթ, 12 Ապրիլ 2002, Երեկոյեան ժամը 8:30ից, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

ՀՐԱԵՐ

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:



Հայրենասիրու Միջուկ

ՎՏԱՆԳՈՒԱԾ ԼԵԶՈՒՆԵՐ, ԿՈՐՍՈՒԱԾ ԱՇԽԱՐՀՆԵՐ

«ՎՏԱՆԳՈՒԱԾ ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ԴԻՍՆԱՐԿ»-ԻՆ ՆԱԽԱԳԱՐԸ՝ ՆԻԶՈՒՍ ՕՍԼՈՐ «ՔԱՆԹԵՍՓՐԵՐԻ ՌԻԿՈՒՄ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ԿԸ ՔՆԵԷ ԼԵԶՈՒԱՍՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԿԱՊԵՐՆ ՈՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ

Նորագոյն ուսումնասիրութիւններու համաձայն, մարդկութիւնը ամէն տարի երկու լեզու կը կորսնցնէ: Այժմ շուրջ 6500 լեզու գոյութիւն ունի:

Ասիկա փոքր կորուստ մը չէ, որովհետեւ իւրաքանչիւր լեզու իւրապատու կախարհահայեացքի մը արտայայտութիւնն է: Խօսքը բարբառներու չի վերաբերի:

Իւրաքանչիւր լեզու ինքնին խօսելու տարբեր ձև մըն է եւ հասկնալի՝ միայն անոնց համար, որոնք իրենց մանկութենէն սորված են զայն: Լեզուական իւրաքանչիւր աշխարհահայեացքով կազմաւորուած կ'ըլլայ աւելի քան մէկ միլիոն հոգիի կեանքը, որովհետեւ որեւէ լեզու պէտք է հազարաւոր տարիներ գոյութիւն ունեցած ըլլայ կազմաւորուելու համար: Հետեւաբար իւրաքանչիւր լեզու կը մարմնաւորէ հարիւրաւոր սերունդներու յիշողութիւնները: Իսկ երբ լեզու մը կը դիմագրակ կորսուելու վտանգը, կը նշանակէ, թէ զայն խօսող հաւաքականութիւնը իրականութեան մէջ դարձած է իր նախկին ինքնութեան շուրջ: Իւրաքանչիւր սերունդի պատկանող անձ կը կրէ միլիոնաւոր նախնիներու իմացական ճամբաները բաց պահելու մեծ պատասխանատուութիւնը:

Այսուհանդերձ ինքնուրոյն լեզու մը խօսող վերջին անձը ըլլալու երեւոյթը երբեւիցէ նոյնքան համատարած տագնապ մը չէ եղած, որքան՝ այսօր: Աշխարհի լեզուներէն 1700ը հազու 10 խօսող ունի: Անոնց մեծամասնութիւնը կը գտնուի Աւստրալիոյ եւ Հիւսիսային Ամերիկայի մէջ: Իսկ լեզուներու անհետացումին ընթացքը արագ է: 1983ին հիւսիսային

եւ արեւմտեան լեզուները: Իսկ վերջին 1000 տարիներուն՝ միայն արաբերէն եւ պարսկերէն: Գիտենք, որ Ն.-Ք. 3000ին կեդրոնական Հարաւային Աֆրիկէի մէջ տարածուած էր Քամերունի մէջ ծնունդ առած պանթու լեզուն, որ մոռացութեան մատնած է շրջանին խառնածին լեզուները, ինչպէս նաեւ գրեթէ բնաջնջած է աֆրիկեան այլ լեզուներ: Իրօք, երբ կը տեսնենք տիրական լեզուի մը գործածութեամբ յատկանշուած վայրեր, ինչպէս՝ Չինաստանի մէջ մանտարինը կամ Միջին Արեւելքի մէջ՝ արաբերէնը, կ'ենթադրենք, որ երբեւոյթը արդիւնք է տասնեակ մը այլ լեզուներու անհետացումին: Վերջին 500 տարիներուն աշխարհը որոշ չափով ենթարկուած է եւրոպական գերիշխանութեան, որուն պատճառով եւրոպական լեզուները յաճախ փոխարինած են մեծ թիւով այլ լեզուներ: Սպաներէնն ու ֆրանսերէնը տարածուած են կեդրոնական եւ Հարաւային Ամերիկայի մէջ, ռուսերէնը՝ Հիւսիսային Ասիոյ, անգլերէնը՝ Հիւսիսային Ամերիկայի, ինքնազականի եւ Աւստրալիոյ:

Ասիկա միայն վերջին 5000 տարիներու պատմութիւնն է: Այսինքն՝ աշխարհի վրայ լեզուներու գոյութեան ժամանակին 5 առ հարիւրին պատկերը: Անցեալին մարդկային հաւաքականութիւնները փոքր էին եւ հաղորդակցութեան միջոցները՝ բաւական տկար, հետեւաբար լեզուական այլազանութիւնը պահպանելու դժուր էր: Ներկայիս լեզուներու ընդարձակումի ծիրը կ'ընդգրկէ ամբողջ աշխարհը: Համաշխարհային հասարակաց լեզու մը բոլորին հասողութեան սահմաններուն մէջ է: Ժամանակակից կեանքի մէջ քանի մը սերունդ ետք անգլերէնը կրնայ անձանաչելի դարձնել ամբողջ աշխարհը:

Կայնասկան առածը կ'ըսէ. «Ժողովուրդ մը առանց լեզուի՝ ժողովուրդ մըն է առանց սրտի»: Աւանդութիւնը պահուելու առընթեր մատուցող սերունդին թիւը մը շուրջ ներարկելը լեզուներու վերջին օրերու ազդեցութիւնը մըն է: Սակայն թոյլ տալ, որ մատուցող սերունդը անհետանայ եւ իր կապը կորսնցնէ իր ծագումնաբան հետ, կը նշանակէ զայն ձգել անարմատ, երբեք սերունդը չլուծուած, իսկ հասակ նետող սերունդը՝ խաբուած:

Օտարին հրապուրել անթիտելի է: Պատճառներն մէկը այն է, որ տարբեր ժողովուրդներ կը մտածեն բաներ, զորս երբեք պիտի չմտածէինք մենք: Երբ աւանդութիւնները կը գոյատեւեն, անոնք կը հարստացնեն ոչ իր յայտնային ժողովուրդը, որուն կը պատկանին, այլ նաեւ՝ բազմաթիւ ուրիշներ, որոնք պիտի ծանօթանան իրենց անոնց: Հռոմէացիք գաղիացիներէն սորված են անուստուր կառքեր շինել, ինչ որ պատճառ դարձած է, որ անոնք բարեխառն իրենց ճամբաները: Նման գաղափարներ կապ չունէին լեզուի հետ: Թէեւ գաղիացիները արժէք կու տային պերճախօսութեան եւ կախարհական պատմութիւններուն, սակայն այս յատկանիչները երբեք չեն անցած լատիներէնի մէջ եւ կորսուած են նոյնիսկ գաղիերէնի մէջ: Կարելի է մտածել, թէ ասիկա կորուստ մըն էր նաեւ հռոմէացիներուն համար, որովհետեւ անոնք միշտ բարձր գնահատած են պերճախօսութիւնը եւ փորձած են զայն սորվել դասական ժամանակներու յոյն վարպետներէն, բայց երբեք չեն փորձած զայն փնտռել բարբոս ժողովուրդներու մէջ:

Տրամաբանութիւնը կ'ըսէ, թէ բոլոր մշակոյթները իրենց լեզուական աւանդութիւններուն մէջ կը պահպանեն իւրապատու գիտութիւն մը, որ տեւաբար օգտակար կ'ըլլայ տրեւալ ժողովուրդներէ եւ երբեմն նաեւ՝ այլ ժողովուրդներու:

Սակայն այս տրամաբանութիւնը յաճախ կ'անտեսուի: Իրօք, Արեւմուտքի մէջ ընդհանրապէս հակամէտ ենք հետաւորու, որ տարբեր ժողովուրդներու հետ կապ հաստատելու նախաքայլը առնելով՝ մեր մշակոյթը ոչինչ ունի սորվելիք եւ շատ բան՝ սորվեցնելիք:

Տիեկօ տը Լանտա եպիսկոպոսը 400 տարի առաջ այսպէս կը մտածէր, երբ այրել տուաւ մայաներուն բոլոր գիրքերը. «Այս մարդիկը իրենց հին աւանդութիւնները եւ գիտութիւնները գրի առնելու համար կը գործածեն որոշ խորհրդանիշներ եւ տառեր, որոնց միջոցով, ինչպէս նաեւ զձանկարներով եւ զձանկարներով վրայ գրուած խորհրդանիշներով անոնք կը հասկնան, կը բացատրեն եւ կը սորվեցնեն իրենց աւանդութիւնները: Այս տառերով գրուած բազմաթիւ գիրքեր գտանք: Եւ որովհետեւ անոնք միայն նախապաշարումներ եւ սատանայական սխալներ կը բովանդակեն, այրեցինք բոլորը, ինչ որ զարմանալի տարրողութեամբ ընդվզում եւ վիշտ պատճառեց անոնց»:

Նոյն օրիով էր, որ մեր դարուն բողոքական քարոզիչներ վերջ դրին Աւստրալիոյ բնիկներուն ծիսական արարողութիւններուն:

Այս վայրկեանին էքուստորի մէջ քարոզիչներ մեծ ճիգ կը թափեն հաւաքանի հնդկներուն զաւակները սպանական թեքումով դպրոցներ ուղարկելու:

Նման աւեր սփռողները իրենք գիրենք մշակուած կը համարեն, սակայն յաճախ կարողութիւնը չունին մտածելու, թէ իրենց անխնայ արարքներով կը կասեցնեն եւ կը փճացնեն դարբերու եւ հազարամեակներու ընթացքին զարգացած ու փոխանցուած գիտութիւն մը եւ աշխարհահայեացք մը: Կարգ մը ուսումնասիրողներ վերջերս յաջողած են հաւաքել կորուսած լեզուներով գրուած պատմիկներ, որոնք կը պարունակեն ոչ միայն բժշկագիտական տեղեկութիւններ արեւադարձային անտառներու բուսական աշխարհին մասին, այլ նաեւ՝ մտաւորական նոր աշխարհներ եւ զանազաններ, որոնք պարզապէս անտեսուած էին:


Արեւմուտքի ուսումնասիրողներ 1973ին վերծանած են մայաներու բարդ գեղագրութեամբ իրագործուած մեհնապարտութիւնները եւ յաջողած են կարգաւ քարի վրայ փորագրուած թագաւորական արձանագրութիւնները: Այսպէս ի յայտ եկած է մայաներու կրօնին մէջ հիմնական դեր ունեցած գնդակով խաղի մը անուրը. երկային երկուստեանները «փից» կը խաղային խոյս տալու համար Մահուան տիրակալներէն: «Փից» բառը տակաւին կը գոյատեւէ մայաներու տարբեր լեզուներուն մէջ, թէեւ անոր ծիսական կարեւորութիւնը մոռցուած է:

Աւստրալիոյ Մորինկթըն կղզիին վրայ կարգ մը բնիկներ 1960ական տարիներուն տակաւին կը գործածէին գաղտնի լեզու մը, որ կարելի էր սորվեցնել եւ սորվել մէկ օրուան մէջ, ինչ որ կը նշանակէ, թէ անիկա կը բարդ կանար սակաւաթիւ բառերէ, սակայն կրնար արտայայտել բազմաթիւ գաղափարներ: Տամինը, ինչպէս կը կոչուէր այս լեզուն, առաւելաբար կը պարունակէր ծածկաններու հանիչներ եւ անձնական մէկ դերանուն: Այս լեզուն ի դրո՞ք կը դնէր ակնարկութիւններու եւ բնորոշումներու նոր սկզբունքներ:

Մշակութային նման յայտնագործումներ կ'առնուին երկար ժամանակ խօսուած լեզուներու հետ, ինչ որ կը նշանակէ, թէ անոնք պարզապէս անհատի մը գաղափարները չեն պարունակեր եւ նոյնութեամբ չեն յայտնուիր որեւէ այլ տեղ: Լեզուները աւանդութիւններէ սերած են, փոխանցուած՝ սերունդէ սերունդ: Ինչ որ պահպանուած է անոնց մէջ, անխուսափելիօրէն դիմացած է ժամանակի քննութեան: Լեզուները, ի տարբերութիւն մարդոց, հիմնականօրէն անմահ են, ծինելու մասին: Անոնք կը գոյանան, որովհետեւ կը փոխանցուին: Հետեւաբար լեզուական գաղափարները կրնան զարգանալ եւ բիւրեղանալ շատ աւելի երկար ժամանակի վրայ եւ աւելի ամբողջական ձեւով, քան ինչ որ պիտի կարենար իրագործել անհատ մը:

Իւրաքանչիւր լեզու իր մէջ կը խտացնէ գիտական հոյակոյթի նման բան մը, մտածելաբար կ'են յիշողութեան համակարգ մը, որ կը պահպանէ կեանքի ձեւը: Այս հոյակոյթներուն բնոյթը տարբեր է արեւմտեան գիտութիւնէն: Լեզուները կը բովանդակեն հազարաւոր դասեր, զորս սորված են մեր ծինելու կրող նախնիները՝ տարբեր կենցաղներ վարելէ ետք: Եթէ կարելի ըլլայ գտնել լեզուի միջոցով փոխանցուած եւ ցարդ գոյատեւող աւանդութիւնները յարգելու միջոց մը, որպէսզի գտնենք գործածողները միջազգային հաղորդակցութեան ծառայող այլ լեզուներու ծանօթալու ընթացքին չմոռնան իրենց մայրենին, ապա յառաջիկայ դարը կրնայ ակնատես դառնալ աննախընթաց երկխօսութեան մը:

Համացանցի ընդարձակումը կրնայ օգտակար ըլլալ: Անիկա ոչ միայն միջոց մըն է նիւթեր հրատարակելու աշխարհին համար, այլ նաեւ առիթ կու տայ անմիջական հաղորդակցութեան: Փոքր հաւաքականութիւններ աշխարհին կրնան հրամայել բան մը, որ իրենց կը պատկանի: Սակայն անոնք նաեւ առաջին անգամ ըլլալով ուղղակի կապի մէջ կրնան ըլլալ լեզուական այլ աւանդութիւններով շրջապատուած իրենց ազգակիցներուն հետ: Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ասիկա տեղի կ'ունենայ առանց հոգանաւորներու միջնորդութեան (եկեղեցի, միջազգային կազմակերպութիւններ, միջազգային լեզուներ խօսող



Իւրաքանչիւր լեզու կը մարմնաւորէ հարիւրաւոր սերունդներու յիշողութիւնները: Իսկ երբ լեզու մը կը դիմագրակ կորսուելու վտանգը, կը նշանակէ, թէ զայն խօսող հաւաքականութիւնը իրականութեան մէջ դարձած է իր նախկին ինքնութեան շուրջ: Իւրաքանչիւր սերունդի պատկանող անձ կը կրէ միլիոնաւոր նախնիներու իմացական ճամբաները բաց պահելու մեծ պատասխանատուութիւնը:

Կալէսական առածը կ'ըսէ. «Ժողովուրդ մը առանց լեզուի՝ ժողովուրդ մըն է առ առ ց սրտի»: Աւանդութիւնը պահելու առընթեր մատուցող սերունդին թարմ շունչը Գեղարկելը լեզուներու դեմ պայքարելու ազդու միջոց մըն է: Սակայն թոյլ տալ, որ մատուցող սերունդը անհետանայ եւ իր կապը կորսնցնէ իր ծագումնաբան հետ, կը նշանակէ զայն ձգել անարմատ, երբ սերունդը լքուած, իսկ հասակ ցնտող սերունդը՝ խաբուած:

